Ծրագրի անվանումը	Վարդենիս համայնքի Կուտական բնակավայրի 488 մետր արտաքին ցանցի կառուցում
Մարզ	Գեղարքունիք
Համայնքը /համայնքները	Վարդենիս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	.175կմ, 75կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Վարդենիս՝ 39162 Կուտական բնակավայր՝ 270
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Վարդենիս համայնքի Կուտական բնակավայրը սահմանամերձ է
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Բարձրլեռնային
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, գործողությունները և շահառուներ	Վարդենիս համայնքը գյուղատնտեսական համայնք է, եկամտի հիմանական աղբյուրը գյուղատնտեսությունից ստացվող ֆինանսական միջոցներն են, սակայն համայնքաբնակներ հողագործությամբ զբաղվելիս հանդիպում են դժվարությունների կապված ոռոգման համակարգի հետ: Համայնքում գյուղատնտեսության ծավալները մեծացնելու և այն խթանելու համար անհրաժեշտ է ոռոգման ցանցի ընդլայնում և վերակառուցում: Վարդենիս համայնքի Կուտական բնակավայրը բարձրլեռնային է, հանդիսանում է «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ ազդակիր բնակավայր: Գյուղը ունի դպրոց, որտեղ սովորում եմ 30 աշակերտ, ինչպես նաև գործում է բուժկետ, վարչական շենք:

նաև գործում է բուժկետ, վարչական շենք:

Կուտական բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում եմ անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրի հողատարածքները հարմար են ցորեն և գարի ցանելու համար: Սակայն բնակիչները հանդիպում են դժվարությունների կապված հողատարածքների ոռոգման հետ: Բնակավայրում գոյություն ունեցող ոռոգման համակարգը բավարարում է միայն 70 հեկ տարածք ոռոգելու համար: Հողատարածքների մեծ մասն մնում է առանց ոռոգման:

Խնդրին լուծում տալու համար առաջարկվում է գոյություն ունեցող արտաքին ոռոգման ցանցին ավելացնել ևս 488 մետր, որի միջոցով կոռոգվի բնակավայրին պատկանող և 100 հեկ մշակելի հողատարածք: Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշատակիցների կողմից տարված ուսումնասիրություններից պարզվել է, որ աշխատանքները պետք է իրականացնել 60սմ ցեմետ բետոնյա վաքերով:

Ծրագրի ուղղակի շահառուներն են համարվում կուտական բնակավայրի 270 բնակիչներից 160-ը, մոտավորապես 60 տնային տնտեսություն, սակայն արտաքին ցանցւ ավելացմամբ պայմանավորված, ծրագիրը դրական ազդեցություն կունանա նաև բնակավայրի այլ բնակիչների, ինչպես նաև ողջ համայնքի տնտեսության վրա:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը դեռևս առկա չեն, բայց նախնական ուսումնասիրոթյունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30.353.000 ՀՀ դրամ /կից ներկայացված է

	իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/: Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:
Ծրագրի կատարման ժամկետները	**04.01.2024-31.12.2024** Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը:
Ծրագրի հնարավոր ռիսկերը	Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել և իրականացվում են ոռոգման ջրագծերի կառուցման կամ վերակառուցման աշխատանքներ: Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները

Հ/Հ	Միջոցառման անվանում	Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/	Պետական բյուջե /հազ.դրամ/
1	*Վարդենիս համայնքի Կուտական բնակավայրի 488 մետր արտաքին ցանցի կառուցում*	*30.353 490 ՀՀ դրամ*	*30.353 490 ՀՀ դրամ*
1.1	Շինարարական աշխատանք	29.299.490 ՀՀ դրամ	29.299.490 ՀՀ դրամ
1.2	Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում	910.000 ՀՀ դրամ	910.000 ՀՀ դրամ
1.3	Տեխնիկական հսկողություն	90.000ՀՀ դրամ	90.000ՀՀ դրամ
1.4	Հեղինակային հսկողություն	54.000 ՀՀ դրամ	54.000 ՀՀ դրամ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**